

5.23. Թատերահանդիսային գործունեությունը 2018 թվականին

Ըստ թատերահանդիսային 28 կազմակերպությունից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2018թ. ներկայացումներ կազմակերպել է 24-ը, 3-ը գործունեություն չի ծավալել և չի ունեցել ֆինանսական մուտքեր ու ծախսեր, իսկ մյուսը ներկայացում չի կազմակերպել, սակայն ունեցել է ֆինանսական մուտքեր ու ծախսեր: 28 թատերահանդիսային կազմակերպությունից 17-ը դրամատիկական է, 4-ը՝ երաժշտական, 5-ը՝ տիկնիկային, մնացած 2-ը՝ Պատանի հանդիսատեսի թատրոնն է և կրկեսը:

Թատերահանդիսային կազմակերպությունների քանակն ըստ ենթակայության, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.

միավոր

| | Կազմակերպությունների քանակը | այդ թվում՝ ըստ ենթակայության | | |
|--------------------|-----------------------------|------------------------------|--------------|---------------------|
| | | ՀՀ մշակույթի նախարարության | բնակավայրերի | իրավաբանական անձանց |
| ք. Երևան | 18 | 13 | 4 | 1 |
| Արարատ | 1 | 1 | - | - |
| Գեղարքունիք | 1 | - | 1 | - |
| Լոռի | 3 | 1 | 2 | - |
| Կոտայք | 1 | - | 1 | - |
| Շիրակ | 2 | 1 | 1 | - |
| Սյունիք | 2 | - | 2 | - |
| Ընդամենը ՀՀ | 28 | 16 | 11 | 1 |

Թատերահանդիսային կազմակերպությունների գործունեության հիմնական ցուցանիշները, 2018թ.

| | Ներկայացումների քանակը, <i>միավոր</i> | որից՝ | | Հանդիսատեսների թվաքանակը, <i>մարդ</i> | Ստացված հասույթը, <i>հազ. դրամ</i> |
|--------------------------------|---------------------------------------|------------|-------------------|---------------------------------------|------------------------------------|
| | | նոր | հիմնավերանորոգված | | |
| Ստացիոնար ներկայացումներ | 3 089 | 150 | 9 | 525 209 | 622 627.3 |
| որից՝ հիմնական բեմում | 2 152 | 150 | 9 | 413 559 | 428 278.1 |
| Քաղաքից դուրս ներկայացումներ | 168 | - | - | 38 893 | 39 997.5 |
| որից՝ գյուղական բնակավայրերում | 74 | - | - | 12 947 | 6 321.6 |
| Ընդամենը | 3 257 | 150 | 9 | 564 102 | 662 624.8 |

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2018թ. ցուցադրվել է 3 257 ներկայացում, որոնց 31.7%-ը՝ տիկնիկային, 15.9%-ը՝ երաժշտական ժանրի:

2018թ. թատրոններ հաճախումների քանակը կազմել է 564.1 հազ., նրանց 24.8%-ը հաճախել է երաժշտական, 17.5%-ը՝ տիկնիկային թատրոն: Հանրապետության 1 000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 190.0:

Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 662.6 մլն. դրամ, որի 0.9%-ը ստացվել է գյուղական բնակավայրերում կազմակերպված ներկայացումներից, 33.1%-ը՝ երաժշտական, 13.2%-ը՝ տիկնիկային ներկայացումներից: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 203.4 հազ. դրամ, ընդ որում, գյուղական բնակավայրերում այդ ցուցանիշը կազմել է 85.4 հազ. դրամ:

Թատերահանդիսային կազմակերպությունների գործունեությունն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.

| | Ներկայացումների քանակը, <i>միավոր</i> | Ներկայացումների քանակն այդպիսիք ունեցող մեկ կազմակերպության հաշվով, <i>միավոր</i> | Հանդիսատեսների թվաքանակը, <i>մարդ</i> | Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, <i>մարդ</i> | Ստացված հասույթը, <i>հազ. դրամ</i> | Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, <i>հազ. դրամ</i> |
|--------------------|---------------------------------------|---|---------------------------------------|--|------------------------------------|---|
| ք. Երևան | 2 634 | 175.6 | 425 334 | 161.5 | 551 480.3 | 209.4 |
| Արարատ | 85 | 85.0 | 16 474 | 193.8 | 9 920.0 | 116.7 |
| Գեղարքունիք | 20 | 20.0 | 3 526 | 176.3 | 2 115.6 | 105.8 |
| Լոռի | 163 | 54.3 | 33 081 | 203.0 | 16 033.7 | 98.4 |
| Կոտայք | - | - | - | - | - | - |
| Շիրակ | 222 | 111.0 | 62 576 | 281.9 | 74 339.7 | 334.9 |
| Սյունիք | 133 | 66.5 | 23 111 | 173.8 | 8 735.5 | 65.7 |
| Ընդամենը ՀՀ | 3 257 | 135.7 | 564 102 | 173.2 | 662 624.8 | 203.4 |

Ֆինանսական միջոցների մուտքն ու օգտագործումը, 2018թ.

| | <i>մլն. դրամ</i> |
|---|------------------|
| Ֆինանսական միջոցների մուտքեր | Ընդամենը |
| | 4 687.5 |
| այդ թվում՝ | |
| ՀՀ բյուջեից (պետական, համայնքային) | 3 714.8 |
| ծառայություններից | 657.8 |
| նվիրատվություններից | 57.0 |
| վարձակալությունից | 185.2 |
| այլ | 72.7 |
| Ֆինանսական ծախսեր | 4 720.9 |
| այդ թվում՝ | |
| նյութական ծախսեր | 526.2 |
| ոչ նյութական ծառայությունների վճարումներ | 401.6 |
| գործուղման ծախսեր | 16.7 |
| աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ | 3 581.7 |
| հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր | 101.1 |
| այլ | 93.6 |

Ֆինանսական մուտքերն ու ծախսերն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.

| | Ֆինանսական մուտքերը | | Ֆինանսական ծախսերը | |
|--------------------|---------------------|---|--------------------|---|
| | ընդամենը | այդպիսիք ունեցող մեկ կազմակերպության հաշվով | ընդամենը | այդպիսիք ունեցող մեկ կազմակերպության հաշվով |
| ք. Երևան | 3 882.5 | 258.8 | 3 917.3 | 261.2 |
| Արարատ | 87.7 | 87.7 | 86.5 | 86.5 |
| Գեղարքունիք | 53.4 | 53.4 | 57.2 | 57.2 |
| Լոռի | 171.6 | 57.2 | 171.6 | 57.2 |
| Կոտայք | 11.7 | 11.7 | 11.7 | 11.7 |
| Շիրակ | 315.4 | 157.7 | 315.1 | 157.6 |
| Սյունիք | 165.2 | 82.6 | 161.5 | 80.8 |
| Ընդամենը ՀՀ | 4 687.5 | 187.5 | 4 720.9 | 188.8 |